



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yaralyan

Հարությունյան Մարիամ

ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոց. Հ. Հովհաննիսյան
Էլ. փոստ՝ mariamharutyunyan55@gmail.com

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

20-րդ դարասկզբի Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրությունը կրոնա-քաղաքական ժամանակակից պայմաններում կարևոր նշանակություն ունի եկեղեցու դերի նորովի արժևորման տեսանկյունից: Հայ առաքելական եկեղեցու պատմության այս շրջանի ուսումնասիրությունը նաև մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ տվյալ ժամանակահատվածում եկեղեցու շրջանակներում և դրանից դուրս ի հայտ եկավ բազմաճյուղ մի շարժում, որը կրոնագիտական ու եկեցաբանական գրականության մեջ ստացավ «Բարենորոգչական շարժում» անվանումը:

17-18-րդ դարերում Եվրոպայում առաջ եկավ մի շարժում, որը հայտնի է «Լուսավորչական շարժում» անունով: Այս շարժման նպատակն էր հասարակության մեջ սերմանել գիտելիքի ու կրթության կարևորությունը՝ կրոնի դերը համարելով երրորդական: Այս շարժման գաղափարական մեկ այլ դրսևորում էր «Ռեֆորմացիոն շարժումը», որը ենթադրում էր սոցիալ-քաղաքական, կրոնամշակութային մի շարժում, որն ուղղված էր Հռոմի կաթոլիկ եկեղեցու վարած քաղաքականությանը և արատավոր գործելակերպին. այս շարժման արդյունքում էլ ձևավորվեց բողոքա-կանությունը: Վերը նշված երկու շարժումների գաղափարական ծնունդ կարելի է համարել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին Հայ եկեղեցու ծոցում առաջացած բարենորոգչական շարժումը:

Լուսավորականները հասարակության զարգացման կարևոր պայման էին համարում գիտելիքը, կատարյալ օրենքները և կրթության տարածումը: Իրենց գաղափարները տարածելու նպատակով նրանք հրատարակել են իմաստասիրական, գեղարվեստական, մանկավարժական, բարոյագիտական բազմաթիվ գրքեր [1]: Լուսավորության գլխավոր ներկայացուցիչներից են Ջոն Լոկը, Ջոն Կոլինը, Ժան-ժակ Ռուսոն, Գյոթեն, Ալեքսանդր Ռադիսևիչը, իսկ հայկական իրականության մեջ լուսավորչական շարժման առաջին կարկառուն ներկայացուցիչներ կարելի է համարել Շահամիր Շահամիրյանին, ինչպես նաև Հովսեփ Էմինին, Մովսես Բաղրամյանին և այլոց:

Ռեֆորմացիան 16-17-րդ դարերում Եվրոպական մի շարք երկրներում առաջացած սոցիալ-քաղաքական, կրոնամշակութային շարժում էր, որն ուղղված էր Հռոմի կաթոլիկ եկեղեցու վարած քաղաքականության ու արատավոր գործելակերպի դեմ: Ռեֆորմացիոն շարժման արդյունքում Եվրոպայում ձևավորվեց բողոքականությունը, որի սկզբնավորողն ու առաջամարտիկը դարձավ նախկին կաթոլիկ վանական

Մարտին Լյութերը (1483-1546 թթ.)՝ չնայած բողոքական գաղափարները Եվրոպայում առաջ էին եկել դեռևս երկար տարիներ առաջ՝ Ջոն Վիկլիֆի, Յան Հուսի շնորհիվ [2]: Շարժման հիմքը դրվեց Գերմանիայում և հետագայում արագորեն տարածվեց Շվեյցարիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, իսկ ավելի ուշ՝ Սկանդինավյան երկրներում:

Բարենորոգչական շարժումը հայ եկեղեցում սկսվել է 19-րդ դարի վերջին. դա հայ լուսավորչական մտքի նոր շարժում էր, որով փորձ էր արվում բարեփոխել հայ եկեղեցին: Բարենորոգչական գաղափարները դարավերջին թափանցեցին նաև եկեղեցու պատերից ներս:

19-րդ դարի վերջին քառորդից, բայց առավել՝ 20-րդ դարի սկզբներին, հայ եկեղեցու շրջանակներում ի հայտ եկած այս բազմաճյուղ շարժումը եկեղեցագիտական գրականության մեջ ստացավ «Բարենորոգչական շարժում» անվանումը: Եվրոպական համալսարաններում կրթություն ստացած մի շարք հայ հոգևորականներ (և ոչ միայն) հանդես եկան բարենորոգչական զանազան ծրագրերով ու առաջարկություններով: Դրանց մեծ մասը թեև մնաց սոսկ որպես ծրագիր, բայց առաջ բերեց մտածողության նորոգման և թարմացման կարևոր շարժում: Բարեփոխումների հիմնական ջատագովները հենց իրենք՝ հոգևորականներ էին, ովքեր հիմնականում էջմիածնի և Արմաշի հոգևոր ճեմարանների շրջանավարտներ էին: Բացի այդ, հոգևորականներն ապրել ու գործում էին եկեղեցական միջավայրում, քաջատեղյակ էին ներքին թերություններից և անգամ ոմանք հենց հանդես էին գալիս համակարգված ծրագրով: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ բարենորոգիչների պահանջը ոչ թե դավանաբանական փոփոխություններն էին, այլ կրոնական ու ծիսական բնույթի խնդիրները: Նրանք, ըստ երևույթին, համարում էին, որ այդ բարեփոխումների արդյունքում ժողովրդի կապը եկեղեցու հետ ավելի կսերտանա, իսկ եկեղեցին էլ իր հերթին կկարողանա համարժեք արձագանքել ժողովրդին հուզող խնդիրներին:

Նրանցից ոմանք հանդես էի գալիս որպես եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչներ, օրինակ՝ թեմակալ առաջնորդներ՝ ընդգրկվելով բարենորոգչության հանձնաժողովներում: Շատերն էլ, ոչ միշտ գտնվելով եկեղեցու ղեկավարման համակարգում, հանդես էին գալիս իբրև առանձին անհատներ՝ իրենց տեսակետներն արտահայտելով սեփական աշխատություններում, հոդվածներում և քարոզներում: Հայ եկեղեցու բարենորոգչության վերաբերյալ հարցերն առավել բուռն արտահայտվեցին 19-րդ դարի 80-90-ական թթ.: Համեմատաբար ավելի ուշ ձևավորված ուղղությունների նպատակն էր տեսնել բարենորոգված, հզորացած եկեղեցական կառույց: Այդ նպատակին հասնելու համար, հատկապես՝ միջոցների ու մեթոդների ընտրության հարցում, բարենորոգիչների հայացքներն ընդգծված տարբերություններ ունեին, ինչի հետևանքով վերջիններս բաժանվեցին տարբեր հոսանքների:

Բարենորոգչական հիմնական ուղղությունների նպատակը (բացի վերը նշվածից) բուն եկեղեցական կառույցի «ներքին հարդարանքներն» էին, որպես օրինակ՝

քահանաների կրթության, կուսակրոնության վերացման, ծիսական կյանքի բարեփոխման ու պատարագի կրճատման և, որ ամենակարևորն է, լեզվի փոփոխության խնդրի (քանի որ ժողովրդական լայն զանգվածներին հասու չէր գրաբարը, առաջարկում էին պատարագը, ժամերգությունները և ծիսական արարողություններն աշխարհաբար կատարել) հարցերը: Բարենորոգչական հիմնական պահանջներից բացի խնդիրներ կային՝ կապված հագուստի, արտաքին տեսքի և ծիսական այլ ատրիբուտների հետ:

Ժամանակի մամուլը հակամարտող երկու թևերին անվանում էր «պահպանողականներ» և «ազատամիտներ», «արևմտական» և «սլավոնասեր» [3], ինչպես նաև «ներսեցիներ» և «դրսեցիներ»: «Կարծում ենք, որ «պահպանողական» և «ազատամիտ» բառերը ժամանակի մամուլում և վերլուծական գրականության մեջ իմաստային առումով կողմնակալորեն են մեկնաբանվել, այլապես հնարավոր չէր եվրոպական չափանիշներով կրթված ու դաստիարակված անձանց մեղադրել «ազատամտության» և հինը ջնջելու միջոցով նորը կառուցելու ապակառուցողական մոտեցումների մեջ: Այդ պատճառով էլ նրանց գաղափարական մոտեցումներն անվանում էին ոչ թե փոփոխություն, այլ բարեկարգություն» [4]:

Հայ եկեղեցու պատմության այս փուլում հրապարակ իջած մի շարք տեսակետներ՝ կապված բարենորոգության հետ, նպատակ ունեին համալիր կերպով բարեկարգել Հայ եկեղեցու հոգևոր-աստվածաբանական, կանոնական ու ծիսական, ինչպես նաև կրթական ոլորտները՝ ժամանակին հարմարեցնելով եկեղեցական կյանքն ու դինամիկ բնույթ հաղորդելով հոգևոր կառույցին: Հայ եկեղեցին բարեկարգելու կողմնակիցները հասկանում էին, որ այդ խնդիրը պահանջում է տևական գործնառնություն: Էջմիածնում տիրող իրավիճակի համար ոմանք մեղավորներ էին փնտրում այն հոգևորականների շրջանում, ովքեր Մայր Աթոռը դիտում էին իբրև զուտ հոգևոր նվիրապետական կառույց [5]: Քիչ չէին նաև այն բարենորոգիչները, ովքեր ստեղծված իրավիճակի համար մեղադրում էին աշխարհիկներին: Նրանք համարում էին, որ աշխարհիկները ոչ թե ցանկանում են աջակցել եկեղեցուն, այլ խլել նրա իշխանությունը: Ուստի, բնական է, որ այդ շարժումները հակառակորդներ ձեռք բերեցին հոգևոր ու հասարակական շերտերում: Բաժանվում էին նաև ընդդիմադիր ուժերը՝ ելնելով իրենց միջև առկա տարակարծություններից: Սակայն ներեկեղեցական կյանքը բարենորոգելու ամենամեծ խոչնդոտը բարենորոգումներն ամբողջովին մերժող պահպանողական հոգևորականներն էին: Դասակարգման այդ մոտեցումներն իրադարձությունների ընթացքի համարժեք արտացոլումն էին:

Պահպանողական թևի ընդդիմադիրները կարևորում էին աստիճանական լուծումները, և կարծում էին, որ արմատական բարեփոխումները ժամանակավրեպ են և ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով նաև ժողովրդի «սովորույթի ուժը»: Կարծիքներ կան և այն մասին, որ այդ իրավիճակը ձեռնտու էր հոգևոր դասին, քանի որ ժողովրդի կրթական ցածր ցենզը հոգևորականությանը հնարավորություն կտար ավելի դյուրին կառավարել եկեղեցին ու հասարակությունը: Պահպանողական

հոսանքի հոգևորականների տեսակետների վերլուծությունը ցույց է տալիս, որ շատ անգամ, առանց հարցի անաչառ քննության, նրանք «կրթյալ ազատամիտներին» մեղադրում էին դարվինիզմի ու մարքսիզմի գաղափարները կրելու, և նույնիսկ կրոնն ավելորդ համարելու մեջ [6]: Իսկ ընդդիմադիր կողմի ներկայացուցիչ պահպանողականները կտրականապես մերժում էին բարենորոգումեր անցկացնել և համարում, որ «ազատության ջահն» իր չափազանց վառ լույսով կվնասեր հայի աչքերը [3]:

Մաղաքիա Օրմանյանի բարենորոգչական հայացքները. Ժամանակի վերլուծաբանները դարավերջին ի հայտ եկած բարենորոգչական շարժման հրահրող ու նախակարապետ համարում էին Մաղաքիա Օրմանյանին, ով, ինչպես նախորդ գլխում նշել ենք, ծնվել էր կաթոլիկ ընտանիքում, իսկ հասուն տարիքում վերադարձել հայ եկեղեցու գիրկը՝ գիտական ու մտավոր ամբողջ ներուժը ներդնելով Հայ եկեղեցու զարգացման գործում: Նա իր «Խոհք եւ խոսք» գրքում ոչ միայն անդրադառնում է իր՝ որպես հոգևորականի՝ հայ եկեղեցու հետ կապված մտահոգություններին, այլև բուն խոհերին՝ շոշափելով կուսակրոնության, ամուսնության խնդիրը, ապահարզանը, քահանայական հարցը, և մասնավորապես՝ հայ եկեղեցու բարեփոխությունը: Ի վերջո, Օրմանյանին ճանաչելու համար առանձնահատուկ կարևորություն ունեն այն էջերը, որտեղ նա բացատրում է հավատքի ու սիրո, ազատության, կանխատեսության, վարչական եղանակի, պարտքի և պարտականության մասին իր ընկալումները: Նրան իր հայացքների համար բազմիցս քննադատել է ժամանակի մամուլը: Օրինակ՝ Տօք. Ն. Տաղաւարեանն իր «Հայոց կաթողիկոսութիւնն եւ այժմու կաթողիկոսի ընտրութիւնն» աշխատության մեջ 17 կետից բաղկացած մեղադրականներով Օրմանյանին հոչակում է ազգային գործերի հարցում ոչ հմուտ մարդ, ազգի դավաճան, խաբեբա, արևմտահայության բոլոր դժբախտությունների պատճառ [7]:

Իր գրիչն Օրմանյանի դեմ ուղղել է նաև Գրիգորեան Ա. «Փտութեան օճախը կամ Օրմանեանի պատրիարքությունը» գրքում, որտեղ Օրմանյանին խստորեն քննադատել է՝ համարելով նրան «լրտես պալատան», կաշառակեր, կաթողիկոսական առթողին ձգտող, ավելին՝ անգամ հաեմատում է Հուդայի հետ [8]: Օրմանյանին սուր քննադատողներին էր նաև Բենիկ վարդապետը, ով ամբողջ կյանքի ընթացքում ակտիվ պայքար մղեց կղերականության դեմ: Նա իր հրատարակած բազմաթիվ հոդվածներում ու գրքերում «խույս չի տալիս» նաև Օրմանյանին քննադատելուց, իսկ բարենորոգչության տեսանկյունից՝ գտում էր, որ հայ եկեղեցին միայն կարող է փրկել «եկեղեցական հեղափոխությունը» [9]: Նրա հասցեին ուղղված քննադատական հրապարակումների շարքում տեղ գտած մեծաթիվ աշխատությունները կարևոր են Մաղաքիա Օրմանյանի հոգևոր-աստվածաբանական, ինչպես նաև հասարակական-քաղաքական գործունեությունը անաչառորեն ուսումնասիրելու առումով:

Օրմանյանի՝ բարենորոգչական շարժման մեջ ունեցած դերի մասին խոսելիս պետք է անդրադառնալ այն հանգամանքին, որ նրա մեկամյա ճեմարանական գործունեության ընթացքում, ինչպես արդեն նշել ենք, հոգևորականության ուղին բռնած (չնայած մինչև վերջ հոգևոր ծառայությանը հավատարիմ մնաց Կարապետ

Տեր-Մկրտչյանը) [10] գիտնական-աստվածաբանները հետագայում մեծ դեր ունեցան բարենորոգչական շարժման մեջ: Բացի այդ, մեծ էր նաև նրա՝ տեսչական և ուսուցչական տարիներին Արմաշի դպրեվանքում ուսանած Բաբկեն Կյուլեսերյանի, Թորգոմ Գուշակյանի և այլոց վրա ունեցած հզոր ազդեցությունը: Դա վկայությունն է այն բանի, որ Օրմանյանն իր դասախոսությունների ընթացքում ուսանողների մոտ արծարծել է բարենորոգված եկեղեցի ունենալու գաղափարը՝ ցանելով այն սերմերը, որոնք, ինչպես տեսանք ունեցան իրենց վառ արտահայտությունը:

Անդրադառնանք մեր ուսումնասիրության համար կարևոր մի խնդրի, այն է՝ Հայ առաքելական եկեղեցու բարենորոգության հարցում ի՞նչ ելակետ էր որդեգրել նշանավոր գիտնական-աստվածաբան Օրմանյանը: Այս մասին խոսելիս պետք է նախ անդրադառնել նշանավոր աստվածաբանի աշխատություններից ևս մեկին, որտեղ հեղինակն ամենայն մանրամասնությամբ վերլուծում է Հայ եկեղեցու պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարենորոգությունը, արարողակարգը, ներկա վիճակը և այլն: «Կարծում եմ, որ ոչ մի գիրք Օրմանյան սրբազանի գրքի չափ ամփոփ սահմաններում նույնչափ պայծառ գաղափար չի փա Հայոց եկեղեցու մասին» [11]: Հայ եկեղեցու դավանանքն ու վարդապետությունը, ծեսերն ու ավանդություններն օտարին ճանաչելու դարձնելու, դարեր ընթացքում կուտակված թյուրիմացություններն ու առասպելները մեկընդմիջտ ցրելու, հայ եկեղեցու դիմագիծը, նրա տեղը մյուս եկեղեցիների ընտանիքի մեջ ճշգրտելու համար նա հեղինակեց «Հայ եկեղեցին»: Ինչպես նշել ենք նախորդ գլխում, այն ընդգրկված է եղել Վատիկանի կազմած արգելված գրականության ցանկում [12]:

Օրմանյանը ջատագովում է կուսակրոնությունը և դեմ է այն առհասարակ վերացնելու տեսակետներին: Նրա կարծիքով՝ անչափահաս ժամանակ կուսակրոնություն ընտրելն ավելի նախնորելի է, քան հասուն տարիքում: «Ամուրի եկեղեցակա-նությունը, ինչ ալ ըլլաանոր ծագումն ու զարգացումը, այլևս օրինական պահանջի կարգ անցած է եւ կրոնական ընկերականության մեջ այդ ընթացքին հետևողներու պետք կա» [13]:

Օրմանյանի կարծիքով՝ հայ եկեղեցու բարեփոխման հարցը սկսել է գործնականում քննարկվել 1905 թ. ռուսական հեղափոխությունից և 1908 թ. Երիտթուրքական հեղաշրջումից հետո: «Երբ որ ամեն կողմ վերանորոգութիւն ու բարեկարգութիւն սկսավ խոսվիլ եւ երբ մեր ազին մեջ ալ եկեղեցական բարեկարգության խնդիրը ընդարձակվեցավ, եւ ամեն կողմե խոսակցություններ եւ խմբագրություններ, ծրագիրներ եւ առաջարկներ սկսան երեսան գալ յուրաքանչյուր ոք իր տեսությանց կամ հաճոյից համեմար եկեղեցական նոր կացություն մը ստեղծել փափագելով...» [13]: Հոգևորականության հետ կապված մի հետաքրքրական փաստ ևս. Օրմանյանի կարծիքով՝ ամուսնացած հոգևորականները պետք է նույնպես նվիրապետական բարձր աստիճաններ ստանան՝ այդ հարցում կանոնական արգելքի չհանդիպելով:

Օրմանյանի համար բարենորոգություն կատարելիս առաջին հերթին պետք է վերականգնել վաղ եկեղեցական կառույցը, այլ ոչ թե եկեղեցին հարմարեցնել ժամա-

նակին ու նրա պահանջներին. «Արդ, եթէ կուզեի բարեկարգութիւն, պետք է հինը նետել, դառնալ նախնական, սկզբնական կետերուն, պետք է վերցնել վերջին ժամանակներու աւելարդութիւնները», - իր դասախոսություններից մեկում պնդում է Օրմանյանը [14]: Սակայն այս տեսակետն ամբողջովին ընդունել, մեղմ ասած, սխալ կլիներ, քանի որ, այնուամենայնիվ, պետք է նշել, որ եկեղեցին դինամիկ զարգացող օրգանիզմ է և պետք է ինչ-որ չափով քայլի ժամանակին համընթաց:

«Պաշտոնեութեան» կամ «պաշտոնեաների» մասին խոսելիս Օրմանյանը նշում էր, որ «Պետք է զարել եկեղեցին եկեղեցականէն: Եկեղեցականին վրայ եղած մեղադրանքը չադեր եկեղեցիին վրայ: Անոնց մեղադրելի ըլալովը Եկեղեցին մեղադրելի չըլա բնաւ» [15, 16]: Այս առումով նա մատնացոյց է անում ծիսական հարցերը և եկեղեցական հնացած կանոնները: Ինդիրն այն է, որ ըստ հեղինակի՝ դարերի ընթացքում Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգը և կանոնիկան ենթարկ-վելով հունական և լատինական ազդեցությունների, կորցրել է իր ճշմարտացիութ-յունը (այդ ազդեցությունները հիմնականում սուր բնույթ են ստացել Բագրատունի-ների, արաբական գերիշխանության, ինչպես նաև Կիլիկիայի կաթոլիկ թագավո-րության շրջանում: Սա պայմանավորված էր հիմնականում այն հանգամանքով, որ եկեղեցին, լինելով ազգային գործերի կենտրոն, քաղաքական հանգամանքների բերումով ստիպված է եղել մի շարք զիջումների գնով ազատվել վերահաս վտանգներից: Հանուն արդարության, հարկ ենք համարում նշել, որ հայ եկեղեցին դարերի ընթաց-քում դավանաբանական հարցերի առնչությամբ որևէ լուրջ զիջման չի գնացել, հատկապես՝ ծիսական և ձևական բնույթի մի շարք այլ հարցերում: «Ծեսերու երկա-րութեան եւ կանոններու խստութեան առթիւպէտք է ընդունենք, որ հայոց եկեղեցին քաղաքական պատճառով հարկադրուր է երբեմն տեղի տալ շատ մի պատշճու-թեանց», - գրում է Օրմանյանը [17]:

Այս ավելորդությունները եկեղեցու հիմնադրման սկզբից չկային, և ըստ աստվածաբանի՝ յուրաքանչյուր բարենորոգիչ պետք է քայլեր անի հին, ավանդական եկեղեցի վերադառնալու համար. «Երբ դարուն ոգին յառաջ կը քաշեն, եւ կը պահան-ջեն որ Եկեղեցին հարմարվի անոր, արիկա ըսելով Եկեղեցիին էութիւնը կատեն, զա այդ պարագային ադիկա ոչաւ կըլլայ Աստուածային հաստատութիւն մը» [16]: Իսկ «Խոհք եւ խոսքում» սրտաբուխ գրում է «...Դարուս հոգին թեթևություն կուզե. Պար-տավորիչ կետեր քիչ, միտք հոգնեցնողները սակավ, ձեռք կաշկանդողը պակաս, բեռ ավելցնողը նվա, եւ այսպես է Հայոց եկեղեցին» [13]: Օրմանյանն այնքանով էր մեծ, որ հանդես էր գալիս ոչ թե քննադատելու, այլ ավանդականը կատարելագործելով եկեղեցու կայունությանը հասնելու դիրքերից: Օրմանյանն այս կապակցությամբ լուրջ խոչընդոտ էր համարում ժողովրդի սովորույթի ուժը, որն ընդդիմանալու էր բարենո-րոգիչների առաջարկած նոր պայմաններին:

Այս ամենի թելադրանքով Օրմանյանի առաջադրած բարեկարգումներն իրա-կանացնելու համար իբրև առաջին քայլ համարում է, որ պետք է հայ եկեղեցին մաքրվի ծիսական հավելումներից և վերադառնա 5-րդ դարի եկեղեցական համա-

կարգին: Քաջ գիտակցելով, որ դա մեկ օրվա գործ չէ, միանգամայն հիմնավոր էր պնդում, որ բարեկարգումները պետք է կատարել շրջահայաց զգուշավորությամբ, քանի որ միայն բարենորոգումների քայլ առ քայլ իրականացմամբ հնարավոր կլիներ նպատակին հասնել: Նա առաջարկում էր սկսել հենց ծեսից ու կանոնների պարզեցումից:

Հայ եկեղեցում աշխարհականների դերի մասին խոսելիս նա ամենայն մանրամասնությամբ հիշատակում է մինչ Պոլոժենիա տիրող վիճակն ու դրանից հետո Պոլսի և Երուսաղեմի պատրիարքների ընտրության գործում նրանց ունեցած դերի, ինչպես նաև քրիստոնեական մյուս եկեղեցիներում աշխարհիկների դերի մասին: Ամփոփելով եզրահանգում է, որ աշխարհականների դերը հայ եկեղեցու կառավարման գործում վնասակար է: Հայ եկեղեցուն տրվելիք անունների առնչությամբ Օրմանյանը կարծում է, որ մեկընդմիջտ պետք է հեռու մնալ խորթ, օտարոտի տիտղոսներից և բնորոշումներից: Նա չի ընդունում ո՛չ լուսավորչական կամ գրիգորյան, ո՛չ «էջմիածնական» մակդիրները՝ համարելով անտեղի, քանի որ հայ եկեղեցին ոչ թե սկսում է Լուսավորչով, այլ հենց առաջին դարից՝ առաքելական շրջանից: Նա ավելի շատ կողմ է «ուղղափառ» մակդիրին, քանի որ դա Արևելյան եկեղեցիների կոչմանը համապատասխան առավելություն կտա, այսինքն՝ նրանց շարքում կունենա իր հստակ անվանումը՝ օրինակ բերելով Ռուս ուղղափառ եկեղեցին՝ Պրավոսլավը, Հունական ուղղափառ եկեղեցին՝ Օրթոդոքսը և այլն: Եթե Հայ առաքելական եկեղեցին Հայ ուղղափառ անվանվեր, ապա ցույց կտրվեր արևելյան մյուս եկեղեցիների հետ սերտ հարաբերությունը՝ իր հնչեղությամբ ընդգծելով ազային հատուկ եկեղեցի կարգավիճակը: Անդրադառնալով եկեղեցու անվան խնդրին՝ պետք է նշենք, որ այս անգամ ևս պատրիարք Օրմանյանի դիրքորոշումն ինչ-որ առումով ընդունելի չէ, քանի որ Հայ առաքելական եկեղեցին իր «առաքելական» մակդիրով նունպես իր ուրույն տեղը ունի արևելյան եկեղեցիների շարքում:

Հայ եկեղեցու շարքում գտնվեցին անծինք, ովքեր մասնակիորենք ընդօրինակեցին օրմանյանական բարենորոգչական հայացքները: Նրանցից հիշատակության է արժանի Գնել Եպիսկոպոս Գալամքերյանը: Բարեկարգության հարցը քննարկելով զուտ եկեղեցական տեսանկյունից՝ Գյուտ Եպիսկոպոսը նշում էր, որ Հայ եկեղեցին նախ պետք է իր ներքին բնույթի հարցերը կարգավորի: Խնդիրն այն էր, որ ըստ Գյուտ Եպիսկոպոսի՝ հայ եկեղեցու բարեկարգության հարցը պետք է թելադրվի ոչ թե արտաքին պահանջներով, այլ արտացոլի հասարակական արդի պահանջները, քանի որ հասարակությունը մշտապես գտնվում է դինամիկ զարգացման մեջ:

Իր մեծ նախորդի հետևությամբ նա ևս կարծում էր, որ եկեղեցու բարենորոգությունը պետք է սահմանափակվի զուտ արտաքին բարենորոգմամբ, այսինքն՝ ծիսական, կանոնական և վարչական խնդիրներով: Ինչ վերաբերում էր ներքին կամ դավանաբանական բարեկարգման հարցին, ապա Գնել Եպիսկոպոսը միանգամայն

հստակ մատնանշում է, որ այդ մասին չպետք է խոսել: Այդ դիրքերից էլ նա ներկայացնում էր եկեղեցու արտաքին բարենորոգման պահանջը հաջորդական հետևյալ գործողությունների տեսքով՝

ա) բարենորոգված եկեղեցին պետք է վերադառնա հին ժամանակների վիճակին,

բ) եկեղեցու բարենորոգությունը պետք է առավելապես վերաբերի եկեղեցականների բարենորոգությանը,

գ) եկեղեցու ծիսական, կանոնական ու վարչական արդի կազմը պետք է բարեկարգվի ժամանակի շնչին համապատասխան:

Նա, թերևս, պահպանողական հոսանքի ներկայացուցիչ էր, բայց, այնուամենայնիվ, կարծում էր, որ չպետք է քննադատել այն հայրերին, ովքեր դավանաբանությունը հարմարեցրել են ժամանակին՝ փորձելով բավարարել ժամանակի հոգևոր պահանջները: Այսպիսով, օրմանյանական գաղափարներով ոգեշնչված և դասախոսություններով լիցքավորված՝ Գնել եպիսկոպոսը ևս եզրակացնում է, «որ բարեկարգության հարցն իր մէջ կը բովանդակէ միանգամայն թէ հին վիճակին անդրադառնալու, թէ եկեղեցականները բարելաւելու եւ թէ ժամանակիս ըմբռնումներու քիչ ու շատ համապատասխան կարգադրութիւններ ընելու անհրաժեշտ պետքերը. Հերետաբար մեր տեսութեամբ կը միանան քիչ առաջ մէջ բերված երեք կարծիքները, եւ կը կամենն բարենորոգության ամբողջութիւնը» [14]:

Հետաքրքրական է, որ եկեղեցու մատահրավերներից էր քահանաների կրթական ցածր մակարդակը, ինչի հետևանքով բազում ախտեր կային օրինակ էջմիածնում և հոգևոր տարբեր կենտրոններում: Դրանք հատկապես կապված էին «Հին ցավի» կամ «Քահանայից խնդրի» հետ, որն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Բայց ինչո՞ւ դա արդիական դարձավ հենց 19-րդ դարում. ինչո՞ւ նման խնդիր գոյություն չունեի օրինակ 18-րդ դարում: Սա, իհարկե, պայմանավորված էր հասարակության փոփոխությամբ: Եկեղեցին պետք է մրցակցության մեջ մտնել ոչ միայն այլ եկեղեցիների, այլև արվեստի ու գիտության հետ: Բացի այդ, ավելի կարևոր են դառնում հոգևորի այնպիսի դրսևորումները, ինչպիսիք են՝ արվեստն ու գիտությունը՝ իբրև արտահայտչաձև դառնալով եկեղեցու մրցակիցները:

Վերադառնալով Օրմանյանի բարենորոգչության հետ կապված տեսակետների մասնակի վերլուծությանն ու վերաարժևորմանը՝ պետք է ճշմարտացիորեն նշել, որ եկեղեցին, առհասարակ, որպես դինամիկ կառույց, պետք է մշտապես քայլի ժամանակին համընթաց, ինչպես օրինակ անում էին մեր եկեղեցական հայրերը՝ լուծում տալով ժամանակի դավանաբանական անհարթություններին և ժողովրդական լայն զանգվածներին հուզող խնդիրներին, բայց միևնույն պահին դավանաբանական լուրջ փոփոխություններ չիրականացնելով, քանի որ եկեղեցու ձևին առնչվող հարցերը լուծելի են, սակայն պահանջում են քայլ առ քայլ մոտեցումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Լուսավորություն, Հայկական հանրագիտարան, 2010,
URL: <http://www.encyclopedia.am5> (հղումը կատարվել է՝ 19.08.2017):
- [2] Ռեֆորմացիա, URL: <http://kronadaran.am/dictionary/reformacia/> (հղումը կատարվել է՝ 16.09.2017):
- [3] **Գյուտ աբեղա**, Կարապետ եպիսկոպոսը իբրև հոգևորական, Էջմիածին, 1917, էջ 11, 10:
- [4] **Հովհաննիսյան Հ.**, Հայ առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901-1906 թթ., Երևան, 2008, էջ 128:
- [5] **Տեր-Մինասյանց Ե.**, Հայ եկեղեցու վերանորոգության խնդիրը, Թիֆլիս, 1910, էջ 7-9:
- [6] **Հովհաննիսյան Հ.**, Մաղաքիա Արք. Օրմանյանը և 20-րդ դարասկզբի հայ եկեղեցու բարենորոգչական շարժման հիմնահարցը, Հայ Աստվածաբան, գիտական հոդվածների ժողովածու, Ա, Երևան, 2007, էջ 155:
- [7] **Տօք. Տաղաարեանը Ն.**, Հայոց կաթողիկոսութիւնն եւ այժմու կաթողիկոսի ընտրութիւնն, Գահիրէ,
URL: http://greenstone.flib.sci.am/gsd/collect/hajgirq/book/hayoc_kathoxik_index.html:
- [8] **Գրիգորյան Ա.**, Փտութեան օճախը կամ Օրմանեանի պատրիարքությունը, Պոսթոն, էջ 52-4:
- [9] **Բենիկ վարդապետ**, Սրտագին խոսք, Յերեւան, էջ 28; Էջմիածնի արդարությունը, մաս Ա, Թիֆլիս: Իմ պատասխանը (Էջմիածնի բարոյական ակտաժետներին), Յերևան:
- [10] **Տեր-Մինասյանց Ե.**, Կարապետ Տեր-Մկրտչյան, կյանքն ու գործունեությունը, Մոսկուա, էջ 79, **Գիտ աբեղա**, Կարապետ եպիսկոպոսը իբրև հոգևորական, Էջմիածին, էջ 30-3:
- [11] **Ուելդոն Ջ.**, Մանչեսթր, URL: <http://booksfromarmenia.com/blog/hy/Ormanian-Church-of-Armenia-English> (հղումը կատարվել է՝ 16.04.2018):
- [12] Կրոնի հանրագիտարան, URL: <http://booksfromarmenia.com>, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Հովհաննես Այվազյան, Երևան, 2002, էջ 1069:
- [13] **Օրմանյան Մ.**, Խոհք և խօսք, Երուսաղեմ, 1929, էջ 48-9, 305, 309:
- [14] Նախատարերք հայ եկեղեցագիտութեան, Կէզիրեան Ջ., Դասախօսութիւնք Ամեն. Օրմանեան եւ Դուրեան Ս Արքեպիսկոպոսներու եւ Տ. Գնել Գալամբէրեանի քահանայից լսարանին մէջ, Կ. Պոլիս, էջ 34, 30, 120:
- [15] **Ավթանդիլյան Ա.**, Ազգի և եկեղեցու նույնացումը բացասաբար է ազդում մեր մշակույթի և ազգային ինքնության վրա, URL: <https://vahagnakanch.wordpress.com> (հղումը կատարվել է՝ 20.06.2017):
- [16] **Սիրունի Հ.**, Օրմանյանը և իր ժամանակը, «Էջմիածին», 1962, Դ, Էջմիածին, էջ 32, 31:

Հարությունյան Մարիամ

**ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈՂՉԱԿԱՆ
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ**

Բանալի բառեր՝ լուսավորչականություն, բարենորոգչություն, «Նոր» եկեղեցի, երկշերտ հասարակություն:

Հոդվածում ամենայն մանրամասնությամբ անդրադարձել ենք բարենորոգիչ պատրիարքի՝ եկեղեցական կյանքը վերափոխելու լուծումներին: Նպատակն է համակողմանի վերլուծության միջոցով անաչառորեն վեր հանել բարենորոգչական հայացքների ներքին և արտաքին խնդիրները: Ուսումնասիրության ընթացում հանգել ենք այն եզրակացությանը, որ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի բարենորոգչական հայացները և դրանց իրագործումը ժամանակավրեպ էին և ոչ նպատակահարմար:

Арутюнян Мариам

РЕФОРМИСТКИЕ ВЗГЛЯДЫ МАЛАХИЯ АРХ. ОРМАНЯНА

Ключевые слова: просвещение, реформация, «Новая» церковь, двухстороннее общество.

В статье обсуждаются решения реформистского патриарха по отношению к трансформации церковной жизни. Цель исследования - объективно выявить внутренние и внешние проблемы неоинституциональных взглядов. В результате исследования мы пришли к выводу, что реформистские взгляды Малахия. Арх. Орманяна и их реализация были несвоевременными и неуместными.

Harutyunyan Mariam

MALACHIA ARCHBISHOP ORMANIAN'S PHILANTHROPIC VIEWS

Key words: Enlightenment, benevolence, 'New' church, two-sided society.

The article touches upon the solutions of the reformist patriarch referring to the transformation of church life. The aim of the research has been to identify the inner and outer problems of neo-institutional views in an impartial way. At the end of the study, we concluded that Malachia arch. Ormanian's philanthropic views and their implementation were untimely and inappropriate.